«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Պատմություն (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

1. Դեռևս 13-րդ դարում Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում» նշել էր. «Արդարության հիմքը խղճի ազատությունն է, բայց օրենքն է սահմանում դրա սահմանները»: Երեք դար անց միայն Եվրոպայում լուսավորականների գաղափարախոսությունների մեջ հայտնվեցին համարժեք գաղափարներ: Կարո՞ղ ես նշել հայտնի որևէ լուսավորականի անուն և նրա գաղափարը, որը համարժեք էր Մ. Գոշի ներկայացրած դրույթին: (1 միավոր)

_____

_____

2. **Ստորև պատկերված իշխանական տները (տես նրանց զինանշանների նկարները) միավորված են եղել մեկ իշխանության ներքո, որի զինանշանը պատկերված է առանց գրառման (տես հաջորդ էջում): Փորձի՛ր պատասխանել տրված հարցերին.** (3 միավոր)

ա) ո՞ր իշխանական տան մասին է խոսքը(ու՞մ զինանշանն է պատկերված առանց գրառման),

բ) ինչպիսի՞կարևորագույն պաշտոններ են զբաղեցրել նրանք Հայաստանի հարևան երկրում (նշե՛ք նաև այդ երկիրը),

գ) Հայաստանի ո՞ր մասերում էր տարածվում նրանց ազդեցությունը:



Վահրամյանների զինանշանը

Օրբելյանների զինանշանը

Պռոշյանների զինանշանը

3. Տրված բառաշարքերից առանձնացրեք այն բառերը, որոնք վերաբերում են՝
ա) պարսիկներին,
բ) արաբներին,
գ) մոնղոլներին,
դ) թուրքերին և տեղադրեք ճիշտ սյունակներում (4 միավոր)

Խալիֆա, էլայեթ, սուլթան, սատրապություն, խան, շահ, իլխանություն , Կարակորում, Աբբասյաններ / Օմայաններ, Բաղդադ, Ստամբուլ,ամիրայություն, Սելիմ Ահեղ, շիա, սուննի,Շահ Աբաս, Թավրիզ, «մեծ սուրգուն», Չինգիզ խան, ջիզիա, Մեքքա, իսլամ, Օսման, թաթար, «ծովի տիրակալ», «ղզլբաշներ»,, զրադաշտականություն, մարզպան:

ա	
բ	
գ	
դ	

4. Օգտվելով տրված հարցերից՝ լրացրե՛ք աղյուսակը՝ միմյանց հետ համեմատելով Կիլիկիայի Հայկական և Բագրատունյաց թագավորությունները: (7միավոր)

ա) աշխարհագրական ի՞նչ տարածք էին ընդգրկում

բ) ու՞մ դեմ էին պայքարում անկախանալու համար

գ) ե՞րբ են հռչակվել թագավորություն, ո՞վ էր առաջին արքան, ու՞մ օրոք և ո՞ր կաթողիկոսներն են օծել

դ) ո՞րն էր մայրաքաղաքը և ե՞րբ էր հռչակվել

ե) ինչպիսի՞ն էր բանակի հիմնական կառուցվածքը և ամենակարևոր առանձնահատկությունը

զ) միջազգային հարաբերություններում համագործակցության ի՞նչ օրինակ կնշեք

է) ի՞նչ ավարտ ունեցավ թագավորությունը և ե՞րբ կործանվեց:

Կիլիկիայի Հայկական թագավորություն	Բագրատունյաց թագավորություն
Ա.	
Բ.	
Գ.	
Դ.	
Ե.	
Զ.	
Է.	

5. Տարբեր ժամանակաշրջանների և երկրների այս ղեկավարները մնացել են պատմության մեջ որպես մեծագույն զորավարներ կամ պետական գործիչներ: Բայց նրանցից յուրաքանչյուրն իր գործունեության ընթացքում ձգտել է անել ավելին, քան միայն հողային տարածքների կամ իշխանության ձեռք բերելն էր: Ներկայացված թևավոր արտահայտությունները համապատասխանեցրու իրենց հեղինակներին և նրանցից յուրաքանչյուրի գործունեությունից ներկայացրու առնվազն մեկ քայլ, որը կհիմնավորի նրա արտահայտությունը: (5միավոր)

1 2 3

4 5

«Ես պետք է լինեմ իմ ժողովրդի առաջին ծառան»:_____
_____
_____

«Ռուսաստանը պետք է լուսավորել արևմուտքից»:_____
_____
_____

«Պատմության մեծ հարցերը լուծվում են երկաթով և արյունով»:_____
_____
_____

«Իմ հոր շնորհիվ ես ապրում եմ, բայց ուսուցիչիս շնորհիվ՝ ապրում եմ արժանապատվորեն»։

«Իմ իրական փառքը չի բխում նրանից, որ ես հաղթել եմ քառասուն ճակատամարտերում. Վաթեռլոոն կջնջի այդ բոլոր հաղթանակների հիշողությունը: Բայց այն, ինչ հավերժ կապրի, իմ ‹‹Քաղաքացիական կոդեքսն›› է»։